

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի
ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական
հաշվառման վարչության պետ
տիկին Հասմիկ ԲԱՂԻՆՅԱՆԻՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչության
փորձագետի կողմից 07.10.2021թ.-05.11.2021 թվականն ընկած
ժամանակահատվածում կատարված աշխատանքների վերաբերյալ

Համաձայն ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2021 թվականի
սեպտեմբերի 28-ի N90-Ա/3 հրամանով հաստատված ՀՀ քաղաքաշինության
կոմիտեի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման
վարչության փորձագետի կողմից իրականացվող աշխատանքային ծրագրի՝
07.10.2021թ.-05.11.2021 թվականն ընկած ժամանակահատվածում իրականացրել են
հետևյալ աշխատանքները.

- հաշվապահական հաշվառման էլեկտրոնային «ՀԾ» համակարգում
կատարված գործառնություններն ուսումնասիրել են, ստուգել և համեմատել
են գրանցված տեղեկատվությունը հաշվարկային փաստաթղթերի, ինչպես
նաև Client-TREASURY համակարգով կատարված տեղեկատվության,
մուտքերի, ձևակերպումների և մնացորդների հետ,
- մուտքագրել և ձևակերպել են հաշվարկային փաստաթղթերը ըստ ամիսների
հաշվապահական հաշվառման էլեկտրոնային «ՀԾ» համակարգում, ինչպես
նաև շրջանառությունը ըստ ամիսների Client-TREASURY համակարգով
կատարված գործարքների հիման վրա,
- ստուգել, համեմատել և ճշտել են կատարված շրջանառությունը,
մնացորդների ճշտությունը գլխավոր գրքի շրջանառության և մնացորդների
հետ համեմատելով,
- ստուգել և ճշտել են հաշվապահական հաշվառման էլեկտրոնային «ՀԾ»
համակարգում հաշվառված հիմնական միջոցների մուտքերի, ելքերի,
մնացորդները,

Client-TREASURY համակարգով կատարված էլեկտրոնային վճարային
գործարքների վերաբերյալ հայտնում են, որ տարվա վերջին մնացորդները
համապատասխանում են գլխավոր գրքի մնացորդների հետ:

Հաշվապահական հաշվառման էլեկտրոնային «ՀԾ» համակարգում կատարված գործառնությունների ուսումնասիրությունները ծավալների պատճառով դեռևս չունեն ավարտական տեսք:

Հաշվապահական հաշվառման էլեկտրոնային «ՀԾ» համակարգում հաշվառված հիմնական միջոցների հետ կապված կատարվել են ընտրանքային ուսումնասիրություն:

Նշված աշխատանքները կրում են շարունակական բնույթ:

Ֆինանսատնտեսագիտական և
հաշվապահական հաշվառման
վարչության փորձագետ



Սուսաննա Զարյան

Հաշվետու ժամանակահատվածում կատարված աշխատանքները գնահատում եմ

« *լավ* »

Ֆինանսատնտեսագիտական և
հաշվապահական հաշվառման
վարչության պետ



Հասմիկ Բաղինյան

«05» « 11 » 2021 թվական